ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N o 798-Ա/2 «01» հունիսի, 2023 թ.

ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐՈՎ ՎԵՐԱԶԻՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳԻՏԱԿԱՆ ՍԱՐՔԵՐԻ/ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ՀՐԱՎԵՐԻ ՓԱԹԵԹԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Կազմակերպել գիտական կենտրոնները ժամանակակից սարքավորումներով վերազինելու նպատակով գիտական սարքերի/սարքավորումների գնման հայտերի ընտրության մրցույթ:

2. Հաստատել մրցույթի հրավերի փաթեթը՝ համաձայն հավելվածի:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝ **Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

Հավելված
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
«01» հունիսի, 2023 թ.
N 798-Ա/2 հրամանի

Հ Ր Ա Վ Ե Ր

ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐՈՎ ՎԵՐԱԶԻՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳԻՏԱԿԱՆ ՍԱՐՔԵՐԻ/ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ

Գիտական կենտրոնները ժամանակակից սարքավորումներով վերազինելու նպատակով գիտական սարքերի/սարքավորումների գնման համար ՀՀ գիտության կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) կազմակերպում է հայտերի ընտրության մրցույթ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի հունիսի 1-ի N 798-Ա/2 հրամանի:

1. Մրցույթին մասնակցելու հայտ (այսուհետ՝ Հայտ) ներկայացվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրում ընդգրկված գիտական պետական կազմակերպությունների կամ բուհերի (այսուհետ՝ Կազմակերպություն) կողմից՝ համաձայն սույն հրավերի հավելված N 1-ի, տպագիր և էլեկտրոնային տարբերակներով:
2. Հայտի տպագիր տարբերակը ներկայացվում է հայտատու Կազմակերպության ղեկավարի գրությամբ, սարքի/սարքավորման անվանման նշումով, ք. Երևան, Օրբելի եղբայրների 22, 7-րդ հարկ, 708 սենյակ:
3. Հայտի էլեկտրոնային տարբերակը ներկայացվում է նիշքի Microsoft Word Document (.docx) տեսակով՝ Կոմիտեի support@scs.am էլեկտրոնային հասցեին:
4. Հայտերի ներկայացման վերջնաժամկետն է 2023 թվականի օգոստոսի 4-ը:
5. Հայտը պետք է ներառի սարքի/սարքավորման համատեղ օգտագործման առնվազն մեկ առաջարկություն: Այդ դեպքում Հայտ ներկայացվում է այն Կազմակերպության կողմից, որտեղ գիտական սարքը/սարքավորումը տեղակայվելու է, և կցվում է տվյալ սարքի/սարքավորման անհրաժեշտության մասին շահագրգիռ կազմակերպության (կազմակերպությունների) հիմնավորում(ներ)ը:
6. Սարքը/սարքավորումը գնելու համար համաֆինանսավորման առաջարկություն չի նախատեսվում:

7. Հայտով ներկայացվում է միայն սարքի/սարքավորման գնումն ապահովելու համար անհրաժեշտ գումարը՝ առանց սպասարկող մասնագետների վերապատրաստման կամ այլ ծախսերի:

8. Հայտին կցվում է համապատասխան գնային առաջարկ(ներ)ը:

9. Հայտերը գնահատելու համար ստեղծվում է մրցութային (գնահատող) հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով):

10. Մրցույթի պայմաններին բավարարող Հայտերը տրամադրվում են Հանձնաժողովին՝ գնահատման:

11. Հանձնաժողովը կարող է ներկայացնել առաջարկություն Հայտերի քննարկման առաջնահերթության վերաբերյալ, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում Հայտը վերադարձնել լրամշակման:

12. Հանձնաժողովը գնահատում է Կազմակերպության գիտական և գիտատեխնիկական գործունեության համար սարքի/սարքավորման անհրաժեշտությունը, մոդելի ընտրությունը, անալոգների հետ համեմատությունը, համատեղ օգտագործման մեխանիզմները, շահագործման ծախսերը և դրանց ծախսածածկման հնարավորությունները, հնարավոր եկամուտները, շահագրգիռ կազմակերպությունների մասնակցության հիմնավորումը, օրացուցային պլանը և առաջիկա 3 տարիների համար արդյունքների քանակական և որակական ցուցանիշները, ինչպես նաև Կազմակերպությունում սարքի/սարքավորման հետ աշխատանքի փորձ ունեցող մասնագետների առկայությունը՝ լրացնելով գնահատման թերթիկը (սույն հրավերի հավելված N 2):

13. Հաշվի առնելով յուրաքանչյուր Հայտի ընդհանուր գնահատականը՝ Հանձնաժողովը կազմում է Հայտերի գնահատականների նվազման կարգով վարկանիշային ցանկ և գնահատման արդյունքների հիման վրա տալիս է սարքի/սարքավորման գնման նպատակահարմարության վերաբերյալ եզրակացություն:

14. Հավասար միավորների դեպքում նախապատվություն տրվում է այն Հայտին, որում շահագրգիռ կազմակերպությունների թիվն ավելի մեծ է, իսկ վերջինիս հավասարության դեպքում՝ Հանձնաժողովը կազմակերպում է այց հայտատու Կազմակերպություն՝ տեղում ծանոթանում դրա նյութատեխնիկական բազայի վիճակին և համապատասխան մասնագետների առկայությանը, ապա տալիս է համապատասխան եզրակացություն:

15. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարը, ելնելով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի

համապատասխան միջոցառման իրականացման համար նախատեսված հատկացումների չափից, հաստատում է գնման ենթակա սարքերի/սարքավորումների ցանկը:

16. Գնման ենթակա սարքերի/սարքավորումների ցանկը համալրվում է նախորդ մրցույթի արդյունքներով գնման ենթակա, սակայն դեռ չգնված սարքերով/սարքավորումներով:

17. Կոմիտեն, «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, կազմակերպում է գիտական սարքերի/սարքավորումների գնման գործընթացը: Անհրաժեշտության դեպքում Կազմակերպությունը մասնակցում է գնման գործընթացին:

18. Գնված սարքը/սարքավորումը Կոմիտեն համապատասխան պայմանագրով տրամադրում է հայտատու Կազմակերպությանը:

19. Կազմակերպությունը մշակում է գնված սարքի համատեղ օգտագործելու ընթացակարգ(եր), սարքի տեխնիկական բնութագիրը և կիրառման հնարավորությունների մասին տեղեկատվությունը հրապարակում է Կազմակերպության պաշտոնական կայքում:

20. Գիտական սարքի/սարքավորման գնումից հետո յուրաքանչյուր 12 ամիս հետո Կազմակերպությունը Կոմիտե է ներկայացնում ընթացիկ (տարեկան), իսկ 36 ամիս հետո՝ ամփոփիչ հաշվետվություն (այսուհետ՝ Հաշվետվություն):

21. Հաշվետվությունը պետք է պարունակի տեղեկություններ սարքի/սարքավորման շահագործմանը մասնակցած Կազմակերպությունների և խմբերի, ինչպես նաև իրականացված աշխատանքների ծավալի, բնույթի, ստացված արդյունքների (հրապարակումներ, գիտաժողովներ, նորարարական կարողության կիրառություն, մտավոր սեփականության տնօրինում և այլն) վերաբերյալ:

22. Հաշվետվությունների հիման վրա Հանձնաժողովը տալիս է եզրակացություն:

23. Հաշվետվություն չներկայացնելու կամ վերջինիս վերաբերյալ Հանձնաժողովի բացասական եզրակացության դեպքում Կոմիտեն կարող է կատարել սարքի/սարքավորման տեղակայման վայրի փոփոխություն:

24. Մրցույթի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն և խորհրդատվություն կարելի է ստանալ ՀՀ գիտության կոմիտեի գիտական գործունեության կազմակերպման վարչությունից՝ զանգահարելով 010-210-140 (*113; *116):

Հավելված N 1

Գիտական կենտրոնները ժամանակակից սարքավորումներով վերազինելու նպատակով գիտական սարքերի/սարքավորումների գնման հայտերի ընտրության մրցույթի հրավերի

Հ Ա Յ Տ

ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐՈՎ ՎԵՐԱԶԻՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳԻՏԱԿԱՆ ՍԱՐՔԵՐԻ/ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

ԳՆՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ

Հայտը հանձնված է «_____» _____ 20.. թ. Ծածկագիր՝ _____

(*լրացվում է ՀՀ գիտության կոմիտեում*)

Տ Ի Տ Ղ Ո Ս Ա Թ Ե Ր Թ

1. Հայտատու կազմակերպության

- լրիվ և կրճատ անվանում
- հասցե
- հեռախոսահամար
- էլեկտրոնային փոստի հասցե
- ղեկավարի (տնօրեն/ռեկտոր) Ա.Ա.Հ. (լրիվ)

2. Սարքի/սարքավորման

- անվանում
- գիտության բնագավառ(ներ)
- մոդել
- արտադրող
- գին[1]
- գնման գործընթացի հավանական տևողություն[2]

3. Սարքի/սարքավորման շահագործման պատասխանատու անձի

- Ա.Ա.Հ. (լրիվ)
- պաշտոն
- հեռախոսահամար
- էլեկտրոնային փոստի հասցե

---

[1] *Հայտին կցվում է համապատասխան գնային առաջարկը*

[2] *Նշվում է լրացուցիչ հարցումով ճշտված կամ գնային առաջարկում առկա մուտավոր ժամանակահատվածը, որն անհրաժեշտ է սարքը գնելու և մինչև Կազմակերպություն տեղափոխելու համար*

4. Շահագրգիռ կազմակերպության[3]

- լրիվ և կրճատ անվանում
- հասցե
- հեռախոսահամար
- էլեկտրոնային փոստի հասցե
- ղեկավարի (տնօրեն/ռեկտոր) Ա.Ա.Հ. (լրիվ)

Հայտատու կազմակերպության ղեկավարի ստորագրություն _____

Կ.Տ.

«____» _____ 20.. թ.

[3] *Լրացվում է յուրաքանչյուր շահագրգիռ կազմակերպության համար առանձին*

ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ[4]

Շահագրգիռ կազմակերպության ղեկավար՝ _____ _____

(ստորագրություն) *(անուն, ազգանուն)*

Կ.Տ.

«____» _____ 20. թ.

---

[4] *Լրացվում է յուրաքանչյուր շահագրգիռ կազմակերպության համար առանձին*

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՍԱՐՔԻ/ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ

ՓՈՐՁ ՈՒՆԵՑՈՂ ԿԱՄ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ներգրավված մասնագետներ				
ազգանունը, անունը, հայրանունը	պաշտոնը	գիտական աստիճանը	աշխատանքային փորձը	
			ժամանակահատվածը	գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը / վերապատրաստող կազմակերպությունը (գործունեության ոլորտը)
1	*2*	*3*	*4*	*5*

ՍԱՐՔԻ/ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ[5]

(հայերեն, անգլերեն, ռուսերեն)

Անվանումը	Տեխնիկական բնութագիրը

[5] *Տեխնիկական բնութագրերը ներկայացնել հայերեն, անգլերեն, ռուսերեն*

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ[6]

1. ***Սարքի/սարքավորման անհրաժեշտությունը կազմակերպության (կազմակերպությունների) գիտական և գիտատեխնիկական գործունեության համար***

2. ***Սարքի/սարքավորման մոդելի ընտրության անհրաժեշտությունը, անալոգների հետ համեմատությունը***

3. ***Սարքը/սարքավորումը գնելու և մինչև Կազմակերպություն տեղափոխելու հավանական ժամանակացույց*** *(գնման մրցույթ, պայմանագրի կնքում, սարքի պատրաստում, տեղափոխություն, մաքսազերծում և այլն)*

4. ***Սարքի/սարքավորման համատեղ օգտագործման մեխանիզմները***

5. ***Սարքը/սարքավորումը շահագործելու համար անհրաժեշտ ծախսերը և դրանց ծախսածածկման հնարավորությունները***

6. ***Եկամտաբերության հնարավորությունները***

7. ***Շահագրգիռ կազմակերպությունների մասնակցության հիմնավորումը***

8. ***Նմանատիպ սարք(եր)ի/սարքավորում(ներ)ի առկայությունը ՀՀ-ում***

9. ***Կազմակերպության հագեցվածության աստիճանը տվյալ բնագավառ(ներ)ի այլ սարքերով/սարքավորումներով***

10. ***Տարեկան օրացուցային պլան (3 տարիների համար)***

11. ***Սարքի/սարքավորման հետ աշխատող կամ վերապատրաստված մասնագետների ձեռքբերումները***

12. ***Ակնկալվող արդյունքների քանակական և որակական ցուցանիշները*** *(հրապարակումներ, գիտաժողովներ, նորարարական կարողության կիրառություն (տեխնոլոգիական ներդրում, ցուցադրում, փորձնական նմուշ, նախատիպ և այլն), մտավոր սեփականության տնօրինում (արտոնագիր, հեղինակային իրավունք և այլն))*

13. ***Ռիսկեր և հնարավորություններ*** *(ի՞նչ ռիսկեր կան և ի՞նչ հնարավորություններ կստեղծվեն)*

14. ***Այլ նշումներ***

[6] *Մինչև 8 էջ*

Հավելված N 2

Գիտական կենտրոնները ժամանակակից սարքավորումներով վերազինելու նպատակով գիտական սարքերի/սարքավորումների գնման հայտերի ընտրության մրցույթի հրավերի

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿ

ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐՈՎ ՎԵՐԱԶԻՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳԻՏԱԿԱՆ ՍԱՐՔԵՐԻ/ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԻ

Հայտի ծածկագիր _____

Չափանիշի անվանում	Չափանիշի նկարագրություն[7]	Գնահատական	
1. Անհրաժեշտություն	**Գիտական սարքի/սարքավորման անհրաժեշտության հիմնավորում**		
գերազանց	անհրաժեշտությունը լիարժեք հիմնավորված է, թերություններն աննշան են	5.0	
		4.5	
շատ լավ	անհրաժեշտությունը հիմնավորված է լավ, որոշակի վերապահումներով	4.0	
		3.5	
լավ	անհրաժեշտությունը ընդհանուր առմամբ հիմնավորված է, կան որոշակի անհամապատասխանություններ, որոնք շտկելի են	3.0	
		2.5	
		2.0	
միջին	անհրաժեշտությունը ներկայացված է մակերեսորեն և խիստ անորոշ	1.5	
		1.0	
		0.5	
վատ	անհրաժեշտության հիմնավորումը բացակայում է կամ այն չի կարող որոշվել տեղեկության բացակայության պատճառով	0	
Մեկնաբանություն			
2. Մոդելի ընտրություն, անալոգների հետ համեմատություն	**Գիտական սարքի/սարքավորման մոդելի ընտրության անհրաժեշտության, անալոգների հետ համեմատության հիմնավորում**		
գերազանց	մոդելի ընտրության անհրաժեշտությունը, անալոգների հետ համեմատությունը լիարժեք հիմնավորված են, թերություններն աննշան են	5.0	
		4.5	
շատ լավ	մոդելի ընտրության անհրաժեշտությունը, անալոգների հետ համեմատությունը հիմնավորված են լավ, որոշակի վերապահումներով	4.0	
		3.5	
լավ	մոդելի ընտրության անհրաժեշտությունը, անալոգների հետ համեմատությունն ընդհանուր առմամբ հիմնավորված են, կան որոշակի անհամապատասխանություններ, որոնք շտկելի են	3.0	
		2.5	
		2.0	

[7] *Չափանիշի նկարագրությունն ուղղորդիչ է: «Մեկնաբանություն» բաժնում Հանձնաժողովը կարող է ավելացնել գնահատականը հիմնավորող համապատասխան նշում*

միջին	մոդելի ընտրության անհրաժեշտությունը, անալոգների հետ համեմատությունը ներկայացված են մակերեսորեն և խիստ անորոշ	1.5	
		1.0	
		0.5	
վատ	մոդելի ընտրության անհրաժեշտության, անալոգների հետ համեմատության հիմնավորումները բացակայում են	0	
Մեկնաբանություն			
3. Շահագրգիռ կազմակերպություններ	**Գիտական սարքի/սարքավորման համատեղ օգտագործման առաջարկություն**		
գերազանց	առաջադրված պահանջները լիովին նկարագրված են, թերություններն աննշան են	5.0	
		4.5	
լավ	ընդհանուր առմամբ նկարագրված է, թեև կան անհամապատասխանություններ, որոնք շտկելի են	3.0	
		2.5	
		2.0	
միջին	բավարար ներկայացված չէ՝ դրա վերաբերյալ ամբողջական կարծիք կազմելու համար, ներկայացված է մակերեսորեն և անորոշ	1.5	
		1.0	
		0.5	
վատ	հիմնավորումը բացակայում է	0	
Մեկնաբանություն			
4. Ծախսեր, եկամուտներ	**Գիտական սարքի/սարքավորման շահագործման հնարավոր ծախսերը, ծախսածածկումները և հնարավոր եկամուտները**		
գերազանց	առաջադրված պահանջները լիովին նկարագրված են, թերություններն աննշան են, սարքը/սարքավորումն ունի եկամտաբերության մեծ հեռանկար	5.0	
		4.5	
լավ	ընդհանուր առմամբ նկարագրված է, թեև կան անհամապատասխանություններ, որոնք շտկելի են, սարքը/սարքավորումն ունի եկամտաբերության թույլ հեռանկար	3.0	
		2.5	
		2.0	
միջին	բավարար ներկայացված չեն՝ դրանց վերաբերյալ ամբողջական կարծիք կազմելու համար, ներկայացված են մակերեսորեն և անորոշ	1.5	
		1.0	
		0.5	
վատ	հիմնավորումը բացակայում է կամ ակնհայտ սխալ է, սարքը/սարքավորումը եկամտաբերության հեռանկար չունի	0	
Մեկնաբանություն			
5. Հագեցվածության աստիճանը	**Կազմակերպության հագեցվածության աստիճանը տվյալ բնագավառ(ներ)ի այլ սարքերով/սարքավորումներով**		
գերազանց	հագեցվածությունը համեմատաբար լիարժեք է, կարող է դառնալ համատեղ օգտագործման կենտրոն	5.0	
		4.5	
շատ լավ	հագեցվածությունը համեմատաբար լավ է, որոշակի համալրումներով կարող է դառնալ համատեղ օգտագործման կենտրոն	4.0	
		3.5	
լավ	տվյալ բնագավառ(ներ)ի այլ սարքեր/սարքավորումներ առկա են, կան որոշակի հեռանկարներ	3.0	
		2.5	

		2.0	
միջին	հագեցվածությունը թույլ է	1.5	
		1.0	
		0.5	
վատ	տվյալ բնագավառի այլ սարքեր/սարքավորումներ առկա չեն	0	
Մեկնաբանություն			
6. Մասնագիտացում	**Գիտական սարքի/սարքավորման հետ աշխատող կամ վերապատրաստված մասնագետների ունեցած ձեռքբերումները**		
գերազանց	մասնագետները լիովին բավարարում են սարքի/սարքավորման հետ աշխատելու պահանջներին	5.0	
		4.5	
լավ	մասնագետները մասամբ են բավարարում սարքի/սարքավորման հետ աշխատելու պահանջներին, սակայն կա վերապատրաստման պոտենցիալ	3.0	
		2.5	
		2.0	
միջին	բավարար ներկայացված չէ՝ դրա վերաբերյալ ամբողջական կարծիք կազմելու համար, ներկայացված է մակերեսորեն և անորոշ	1.5	
		1.0	
		0.5	
վատ	տեղեկությունը բացակայում է	0	
Մեկնաբանություն			
7. Ակնկալվող արդյունքներ	**Տարեկան օրացուցային պլան, ակնկալվող արդյունքների քանակական և որակական ցուցանիշները**		
գերազանց	լիովին իրատեսական է, թերություններն աննշան են	5.0	
		4.5	
լավ	ընդհանուր առմամբ իրատեսական է, թեև կան անհամապատասխանություններ, որոնք շտկելի են	3.0	
		2.5	
		2.0	
միջին	բավարար ներկայացված չէ՝ դրա վերաբերյալ ամբողջական կարծիք կազմելու համար, ներկայացված է մակերեսորեն և անորոշ	1.5	
		1.0	
		0.5	
վատ	տեղեկությունը բացակայում է կամ ակնհայտ սխալ է	0	
Մեկնաբանություն			
Ընդհանուր գնահատական (1-7) չափանիշների գնահատականների գումարը)			